

– Ոչ. եթե պարագայները պահանջեն եւ ինձի պետք ունենաս՝ գրե որդուոյս Աշոտին եւ ապահով եղիր թէ ինչ որ կարելի է կը ջանամ ի գործ դնել:

– Շա՛տ բարի, ողջ լեր:

– Աստուած հետդ լինի:

Եւ այսպէս բաժնուեցան իրարմէ այս երկու մարդիկը, եւ Գուրգէն իւր տասը թիկնապահներով մտաւ Վասպուրական, այն գործին ձեռնարկելու, որ երկրին բնիկ ժառանգաւոր իշխանք չէին կոցեր կատարել: Ուայց ճամփայ ելնելու ժամանակ եւ զանազան պարագայից մէջ յիշեց եւ պիտի յիշէր այդ Յովնանու անունը, որուն հետ քանի պատերազմներու մէջ գտնուել էր, եւ որու քաջութիւնը ինչչա՛փ մեծ էր՝ աւելի մեծ էր հեռատեսութիւնն, զգուշաւորութիւնը եւ կառավարութեան ոգին:

Այնպիսի էր ժամանակը, այնպիսի էր երկրին վիճակը, որ քանի մը օրուան մէջ այդ հսկային շուրջը, որ Գուրգէն Արծրունի Ապուպելճ կ'անուանուէր գունդագունդ ժողովուեցան պատերազմողք, եւ ինք մտնելով Աղբազ գաւառը՝ երկու երեւելի բերդ Ջղմար եւ Սրինգ գրաւեց առժամայն: Եւ առանց դանդաղելու յարձակեցաւ Ռշտունեաց Ոստանը, ուր կը նստէր Վասակ Արծրունի Կովակերն անուանեալ եւ որ ինքզինքը զօրավար Վասպուրականի կը հռչակէր. կալանաւորելով զնայ՝ ազատութիւն տուաւ իրեն եւ իմացուց թէ զօրավարութեան պետք էր արժանանալ՝ ո՛չ շուայտութիւն, զուարճութիւն եւ հանգստութիւն փնտրելով, այլ աշխատութեամբ եւ գործունեութեամբ: Եւ խօսքը օրինակաւ հաստատելով՝ սկսաւ ընտիր խումբով շրջիլ բոլոր երկիրը «ուր որ բնակութիւն հաստատէր էին տաճիկք Բուդայի հրամանաւ, սոսկալի հարուածներ վրանին կը հասցնէր, սրով եւ աղեղամբ կը սատակէր զիրենք, եւ անհետ ըրաւ՝ բոլոր Տաճկաց ժողովուրդը, որ բնակած էին Վասպուրական տերութեան մէջ»: